

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուղիս**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

# ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԱՉՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ

**Սոֆյա ՕՅԱՆՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի  
փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի  
փ.գ.թ., դոցենտ  
sofyaohanyan@mail.ru*

XX դարասկզբի հայ սոցիալ-քաղաքական մտքում գերիշխում էին հայ ազգային գիտակցության ու ինքնագիտակցության, հայոց լեզվի ու մշակույթի պահպանման, ազգային արժեքների ճանաչման, հայության ազգային ինքնակազմակերպման և ազգային պետականության վերականգնման գաղափարները, սոցիալական ու կրոնական պատկանելությունից անկախ ժողովրդի տարբեր հատվածների միավորման գործում ազգայնականության առաջնային նշանակության շեշտման սկզբունքները: Այդ պատճառով ժամանակաշրջանի հայ հասարակագիտական միտքը ներկայանում է որպես ազգային գոյապայքարի փիլիսոփայություն և ազատագրական պայքարի գաղափարախոսություն, իսկ հայ մտածողների տեսական ժառանգությունը ստանում է գերազանցապես գործնական՝ հասարակական-քաղաքական նշանակություն և ուղղվածություն:

Ժամանակաշրջանի գաղափարական ընդհանուր մթնոլորտի, սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրների ձևավորման և քննարկման գործում նշանակալից դեր են կատարել Երվանդ Ֆրանգյանը (1878-1928), Դավիթ Անանունը (1879-1943), Ստեփան Շահումյանը (1878-1918), Վահան Խորենին (1885-1920), Գարեգին Նժդեհը (1886-1955), Հայկ Ասատրյանը (1900-1956), Միքայել Վարանդյանը (1870-1934), Սարգիս Կասյանը (1876-1938), Սուրեն Սպանդարյանը (1882-1916) և ուրիշներ<sup>1</sup>: Այս մտածողների շարքում առանձնանում է պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ **Դավիթ Անանունը**<sup>2</sup>, որը, առանցք ընդունելով հայության ազգահավաքման գաղափարը, իր հողվածներում և «Ռուսահայերի

<sup>1</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Օհանյան Ս.**, XX դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն (Երվանդ Ֆրանգյան, Դավիթ Անանուն), թեկնածուականատենախոսության սեղմագիր, Եր., 2008:

<sup>2</sup> Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) ծնվել է 1879 թ. Արցախում՝ Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղում: Դեռևս պատանի հասակում նա հարել է Հնչակյան կուսակցությանը, հետո՝ Դաշնակցությանը, իսկ 1905 թ. դարձել է Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության (սպեցֆիլկներ) տեսաբանը: Նա մեծ դեր է խաղացել հայ մամուլի կայացման գործում, եղել է «Մեր ուղի» (1912 թ.), «Գործ» (1917 թ.) հանդեսների հիմնադիրներից մեկը: 1918 թ. վերջերին Անանունն ապրել է Թիֆլիսում և աշխատակցել «Մշակ», «Նոր հոսանք» թերթերին, 1919 թ. քնակություն է հաստատել Երևանում ու կազմակերպել «Հայաստանի կոոպերացիա» (1919 թ.), «Նորք» (1922 թ.) և այլ պարբերականների հրատարակությունը: Հայաստանում խորհրդային կարգերի

հասարակական զարգացումը» եռահատոր աշխատության<sup>1</sup> մեջ շարադրում է արևելահայերի հասարակական-քաղաքական ու մշակութային զարգացման պատմությունը՝ այդ համատեքստում անդրադառնալով նաև հայ մշակույթի զարգացման առանձնահատկությունների վերլուծությանը<sup>2</sup>:

Ուսումնասիրելով ազգապահպան գործոնները (ազգային ինքնագիտակցություն, մշակույթ, տնտեսություն)՝ Անանունը հետապնդում էր ազգային արժանապատվության ու պատասխանատվության չափանիշներով հայի ինքնահաստատման, նրա հասարակական ու անհատական գոյության կազմակերպման նպատակները: Նա փորձում էր հայ հասարակական կյանքի զարգացման դրդապատճառները փնտրել բուն հայկական իրականության մեջ՝ համարելով, որ ազգերն իրենք են տնօրինում իրենց ճակատագիրը, եթե ցուցաբերում են համապատասխան գիտակցություն ու կամք<sup>3</sup>: Ազգը միատարր զանգված չէ, այլ սոցիալական տարբեր վիճակ ու նպատակներ ունեցող խավերից բաղկացած բարդ համակարգ, և այդ խավերը տարբեր կերպ են շահագրգռված ազգային խնդիրներով: Յետևաբար, ազգային հավաքման ձգտումը տարբեր չափով է արտահայտվում այս կամ այն խավի մոտ, թեև յուրաքանչյուր խավ կրում է պատասխանատվության ու ակտիվ գործունեության իր բաժինը:

Յուրաքանչյուր ազգի մեջ առաջնակարգ դասի մտածողությունն ու գործողություններն իրենց ազդեցությունն են թողնում ենթակա մյուս դասերի վրա, մինչև վերջիններս ճանաչում են սեփական հնարավորություններն ու նշանակությունը, որոշում սեփական քաղաքականությունը: Անանունը հարց է առաջադրում. XX դարի սկզբին հայ ժողովուրդը ներկայացնող ո՞ր խավերն են ի գորու ձեռնարկելու հայության ազգային ինքնակազմակերպման գործը, դառնալու ազգի ներկայացուցիչն ու հանդիսանալու նրա հավաքական ձգտումների ղեկավարը:

Առաջին հերթին նա ուսումնասիրում է, այսպես կոչված, «խոնարի խավերի»՝ գյուղացիության, արհեստավորների ու վաճառականների դասի և բանվորության ազգային նկարագիրը: Այդ խավերը, նրա կարծիքով, կազմում են ազգի ֆիզիկական ուժը, սակայն դրանք չեն կարող ձեռնամուխ լինել ազգի հավաքման գործին, քանզի ազգային զգացումը նրանց մեջ կայուն լճացած վիճակում է և գործի վերածվելու համար ունի արտա-

---

հաստատումից հետո՝ մինչև 1926 թ., նա աշխատել է որպես Յեղափոխության թանգարանի տնօրեն, իսկ 1926 թ. հետո ապրել է Կովկասի սահմաններից դուրս: Մահացել է 1943 թ. Աստրախանում:

<sup>1</sup> Առաջին հատորը լույս է տեսել 1916 թ. Բաքվում, երկրորդը՝ 1922 թ. Էջմիածնում, երրորդը՝ 1926 թ. Վենետիկում:

<sup>2</sup> Տե՛ս **Օհանյան Ս.**, Դավիթ Անանունի մշակութաբանական հայացքները, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված Արցախի պետական համալսարանի հիմնադրման 40-ամյակին», Ստեփանակերտ, 2009; **Օհանյան Ս.**, Դավիթ Անանունի մշակութաքաղաքակրթական հայեցակարգը, «Փիլիսոփայության պատմություն և արդիականություն» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010:

<sup>3</sup> Տե՛ս **ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Դ. Անանունի ֆոնդ, Դ. Անանունի գրությունը պարոն վարչապետին**, Եր., 1920:

քին մղման անհրաժեշտություն: Նրանք անգիտակից են իրենց շահերին, չունեն կազմակերպություններ ու ներկայացուցչություն և ղեկավարներ ստանալով այլ խավերից՝ կատարում են այն, ինչ կարող է կատարել ամբողջ առանց ներքին համոզմունքի և հստակ գիտակցության: Նրանք հայության պատվանդանն են, որի հոգեբանական առանձնահատկություններն են արագ ոգևորությունը և նույնքան արագ հուսահատությունը:

Անանունը հայ ժողովրդի առաջատար դասերից է համարում վաճառականությունը՝ առանձնահատուկ շեշտադրելով այն հանգամանքը, որ հայերը դարեր շարունակ հռչակվել են իրենց գործարար ոգով, վաճառական ձիրքով: Հայ վաճառականների ազգային ու հոգեբանական առանձնահատկությունների վերլուծության համատեքստում Անանունը կիսում է հետազոտողների մեծամասնության կարծիքը՝ ընդգծելով, որ եթե հայ ժողովրդի մոտ զարգացման բարձր մակարդակի վրա է գտնվում առևտրական մշակույթը, ապա դա պետք է ընդունել որպես առավելություն, որն արդի դարաշրջանում ավելի ու ավելի է գնահատվում: Սակայն, գրում է Անանունը, ուսումնասիրվող ժամանակաշրջանում բարդ փոխհարաբերություններ ենթադրող արդյունաբերությունն ու առևտուրը գտնվում էին ցածր մակարդակի վրա. ճիշտ է, հայ վաճառականների մոտ բնագոյային մակարդակում էր գտնվում ձեռներեցության ոգին, սակայն հայ ժողովրդի բոլոր ներկայացուցիչների պես նրանք զուրկ էին հավաքական խմբային գիտակցությունից ու համագործակցությունից:

Հայ ժողովրդի՝ Անանունի վերլուծությանը ենթակա մյուս դասն ազնվականությունն է՝ մելիքները: Նրանք հայկական գավառներն ու գյուղերը կառավարում էին նույն կարգուկանոնով, ինչ իշխում էր տիրող երկրում: Սակայն տարբերությունն այն էր, որ հայ իշխանավորն ու հպատակը երկրորդական ճանաչված ժողովրդի ներկայացուցիչներ էին, հանգամանք, որ իշխանավորին ու հպատակին ամուր շաղկապում էր իրար. իշխանավորն իր հպատակի մեջ էր փնտրում այն գորությունը, որ կարող էր բռնակալի առաջ սեփական արժանապատվությունը պաշտպանելու հարցում օգնել իրեն, հպատակն էլ իր իշխանավորից էր ակնկալում իր ներքին ինքնուրույնությունը պահպանելու ցուցումներ ու ղեկավարություն: Մելիքներն ուժով չէին տիրանում ժողովրդի համակրանքին. ժողովուրդը նրանց ուժից չէր ակնածում և հետևում էր նրանց՝ գիտակցելով այն իրողությունը, որ հայ մելիքների ձեռքի տակ ավելի շատ ապահովություն ու կարգ կար, քան օտարազգի պաշտոնյայի: Իսկ մելիքների ու ժողովրդի հարաբերության բացասական կողմը կապված էր այն բանի հետ, որ հայ ազնվականն ապրում էր՝ ժողովրդին միավորված: Ունենալով մտավոր ցածր մակարդակ՝ նա ապրում էր ժողովրդի հաշվին, հանգամանք, որ չէր կարող ճեղքվածք չառաջացնել նրա ու ժողովրդի միջև, սակայն արտաքին ճնշումները փակում էին այդ ճեղքը:

Անանունի կարծիքով՝ հայ ազնվականության ընտրյալ մասը, նրա ակնավոր ներկայացուցիչները գործիք էին դառնում իշխող պետության ձեռքում, և եթե նրանք միջամտում էին ազգային գործերին, ապա կատարում էին իրենց վրա դրված պարտականությունները՝ որպես կառավա-

րական տեսակետների, նպատակների պաշտպանություն: Յետևաբար, հայ ազնվականությունը ևս ազգային հավաքական ամբողջության տեսակետից անհուսալի միավոր էր<sup>1</sup>:

Անանունի կարծիքով՝ XX դարի սկզբին հայկական միակ միասնական կազմակերպությունը և ազգի ներկայացուցիչը եկեղեցին է, որը, չնայած իր մի շարք թերություններին, ձուլման ու այլասերման դեմ հսկայական պատնեշ է եղել և իր նվիրապետական աստիճանակարգությամբ ու շնորհալի առաջնորդներով ազգային հավաքական միության օղակն է կազմել, իսկ կրոնի ու եկեղեցու մենաշնորհը համարվող գրականությունը մեղմացրել է հայի իրարամերժ ոգին և հայությանը փրկել ոչնչացումից: Սակայն, նրա կարծիքով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում այդ դասի անդամներից քչերն էին համապատասխանում ազգի ներկայացուցիչը լինելու կոչմանը, մյուսներն ունեին գիտակցական ու բարոյական ցածր զարգացում. չնայած իր բազմաթիվ գործակալներին՝ եկեղեցին՝ որպես կենդանի համակարգ, գոյություն չուներ<sup>2</sup>: Սակայն հայ եկեղեցական մտավորականության քայլերը ենթարկվում էին աշխարհիկ մտավորականությանը, ու վերջինիս համար նա կատարում էր միջնորդի դեր՝ և՛ որպես կառավարության կողմից ճանաչված ազգային ներկայացուցչություն, և՛ որպես ազգին օտարացող հայ բուրժուազիայի վրա ճնշում գործադրող և նրան բարեգործության ու նվիրաբերության մղող բարոյական ուժ: Մյուս կողմից՝ երկրի հեղհեղուկ վիճակը թույլ չէր տալիս մտածել մշակութային խաղաղ աշխատանքի մասին, ուստի հայերի հոգևոր կարիքների մասին հնարավոր էր խորհել և այդ ուղղությամբ գործել հայոց աշխարհից դուրս՝ հայկական գաղութներում:

Անանունը կարծում է, որ հասարակական առաջադիմությանը կարող է նպաստել արդյունաբերական կապիտալը ներկայացնող խավը, և ազգի շրջանակներում առաջնակարգ դաս է համարում խոշոր բուրժուազիան՝ ընդգծելով, որ նա է որոշում ազգի քաղաքական դիմագիծը, բովանդակություն տալիս նրա հավաքական ձգտումներին, այսինքն՝ նա պաշտպանում է «հասարակական զարգացման շահերը՝ յատկացնելով բուրժուազիային որոշ շինարար գործունեութիւն, որը միայն նա կարող է կատարել»: Կապիտալիստական հասարակարգում գերիշխող դեր պետք է կատարի բուրժուազիան, որն Անանունի համար արժեքավոր է որպես մարդկային առաջադիմությանը նպաստող տնտեսական դասակարգ: Որևէ ժողովուրդ չի կարող եվրոպականացման ճանապարհը բռնել, եթե եվրոպականացած չէ նրա տնտեսական կառուցվածքը, եթե նրա կյանքի հիմնական պատվանդանը շարունակում է մնալ հետամնաց:

Խոսելով հայ խոշոր բուրժուազիայի մասին՝ Դ. Անանունը քաղաքա-

---

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 1, Բագու, 1916, էջ 256-279:

<sup>2</sup> Տե՛ս **Օհանյան Ս.**, Հայ եկեղեցու դերի գնահատումը Դավիթ Անանունի կողմից, Երկրորդ միջազգային հայագիտական համաժողով «Հայագիտությունը և արդիակա- նության մարտահրավերները», Երևան, 2014, էջ 576:

կան բարձր արժանիքներ չի վերագրում նրան, այլ ցանկանում է ընդգծել, որ հայ ժողովուրդը չէր հայտնվի ծանր, ճգնաժամային վիճակում, եթե բուրժուազիան օժտված լիներ իր դասին ու նյութական զորությամբ համապատասխան հասարակական ինքնագիտակցությամբ և իր գոյությունը նշանավորեր քաղաքական ու հասարակական պայքարով<sup>1</sup>:

Յայ խոշոր բուրժուազիան խուսափում է ազգի աշխարհիկ կյանքից ու համեմատաբար սերտ հարաբերություններ հաստատում կրոնական համայնքի ու հոգևորականության հետ, այսինքն՝ հայ հարուստն ավելի շատ լուսավորչական համայնքի անդամ է, քան թե ազգի ներկայացուցիչ, նրա բարեգործությունն առաջին հերթին կրոնական բնույթի է, քանի որ նա համոզված է, որ ազգապահպանության համար ամենակարևոր գործոնը եկեղեցին է, որի շուրջը համախմբված են ժողովուրդը և հասարակական ու մշակութային հաստատությունները: Դա չի նշանակում, թե նա հավատացյալ է, այլ նա պարտավորվում է լինել որևէ եկեղեցու անդամ: Յետևելով իր նախնիներին՝ նա ընտրել է Յայ եկեղեցու հովանավորությունը, քանի որ վերջինս, խստապահանջ չլինելով իր անդամների նկատմամբ, դժվարություններ չի հարուցում նրանց համար:

Յայ բուրժուազիայի հին սերունդը հայկական զգացմունքներ էր տածում ու հայկական հոգսերով էր տարվում ոչ միայն այն պատճառով, որ ինքը դուրս էր եկել ժողովրդի միջից, այլև որ նա իր բարեկեցությունն ինչ-որ չափով ապահովում էր հենց այդ ժողովրդի աջակցությամբ: Յետևաբար, հին սերունդը դեռևս ազգային էր, որովհետև դա տևտեսապես որոշ չափով ձեռնտու էր: Փոխվեց հայ բուրժուազիայի տևտեսական պատվանդանը՝ փոխվեց նաև նրա վերաբերմունքն իրեն ծնող ազգի հանդեպ: Յայ խոշոր բուրժուազիայի նոր սերունդն ազգային չէ, որովհետև դրա համար տևտեսական ազդակներ չկան:

Այսպիսով, Դ. Անանունը ազգի շրջանակներում առաջնակարգ դաս է համարում խոշոր բուրժուազիան՝ ընդգծելով, որ նա է որոշում ազգի քաղաքական դիմագիծը, բովանդակությունը հաղորդում նրա հավաքական ձգտումներին: Կապիտալիստական հասարակարգում բուրժուազիան մարդկային առաջադիմությանը նպաստող տևտեսական դասակարգն է:

### **Սոֆյա Օհանյան**

#### **ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԿԱՉՄԱՎԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ**

**Բանալի բառեր՝** *ազգ, ազգային ինքնակազմակերպում, առաջադիմություն, ազգի քաղաքական դիմագիծ*

XX դարասկզբի հայ ականավոր մտավորական Դավիթ Անանունը, հայության ազգային ինքնակազմակերպումը համարելով հայ ազգի

<sup>1</sup> Տե՛ս **Անանուն Դ.**, Յայութեան հաւաքական զօրութիւնը, «Աշակ», Թիֆլիս, 1915, թիվ 181, էջ 2:

գերագույն նպատակը և վերլուծելով այդ գործում ազգի յուրաքանչյուր խավի (գյուղացիներ, բանվորներ, վաճառականներ, հոգևորականներ, մտավորականներ, կապիտալիստներ) մասնակցությունը, եզրակացնում է, որ հասարակական առաջադիմությանը կարող է նպաստել արդյունաբերական կապիտալը ներկայացնող խավը: Ազգի շրջանակներում առաջնակարգ դաս համարելով խոշոր բուրժուազիան՝ նա ընդգծում է, որ նա է որոշում ազգի քաղաքական դիմագիծը, բովանդակությունն տալիս նրա հավաքական ձգտումներին:

*Софья Оганян*

## **АНАЛИЗ ПРОБЛЕМ НАЦИОНАЛЬНОЙ САМООРГАНИЗАЦИИ АРМЯН ДАВИДОМ АНАНУНОМ**

**Ключевые слова:** *нация, национальная самоорганизация, прогресс, политический облик нации*

Известный представитель армянский интеллигенции начала XX века Давид Ананун, национальную самоорганизацию армян считая главной целью и анализируя участие в этом деле каждого слоя нации (крестьяне, рабочие, купцы, духовенство, интеллигенция, капиталисты), делает вывод, что общественному прогрессу может способствовать слой, представляющий индустриальный капитал. В рамках нации считая первостепенным классом крупную буржуазию, он подчёркивает, что этот класс определяет политический облик нации, придаёт содержание её коллективным стремлениям.

*Sofya Ohanyan*

## **THE ANALYSIS OF ARMENIAN NATIONAL SELF-ORGANIZATION ISSUES BY DAVIT ANANUN**

**Key words:** *nation, national self-organization, progress, political character of the nation*

Armenian prominent intellectual of the start of XX century Davit Ananun, considering Armenian national self-organization as the supreme purpose of the Armenian nation and analyzing the participation of every class of the nation (peasantry, workers, merchants, clergy, intellectuals, capitalists) in that cause, concludes, that social progress can be promoted by the class, representing industrial capital. Considering large bourgeoisie as a primary class in the framework of the nation, he stresses, that it defines the political character of the nation, gives content to its collective aspirations.